ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ

ГНКО "ГЮМРИЙСКОЕ ГОСУДАРСТВЕННОЕ
РЕМЕСЛЕННОЕ УЧИЛИЩЕ N 4"
МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ДИРЕКТОР

"GYUMRI CRAFTSMAN STATE SCHOOL N4"
SNPO OF THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
OF THE REPUBLIC OF ARMENIA

DIRECTOR

ՀՀ,Շիրակի մարզ,ք. Գյումրի -3126, «Անի» թաղամաս, 11 փողոց, 5/2, Հեռ./Тел./Tel. (0312) 6-64-07, 6-64-08, տնօրեն՝ (094) 84-45-02
РА, Ширакская область, г. Гюмри -3126,"Ани" квартал, улица11, 5/2 ,5/2, St. 11, "Ani" District,Gyumri-3126, Shirak Region, RA
E-mail: k.aharonyan@entanik.am,info@gyumriusumnaran4.am,www.gyumriusumnaran4.am

N 141-22
05.09.2022թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարար
պարոն Վահրամ Դումանյանին

Հարգարժան պարոն նախարար.

Ղեկավարվելով ԿԳՄՍՆ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված՝ «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 8-րդ կետի պահանջով՝ տեղեկացնում եմ, որ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում առկա են հետևյալ թափուր տեղերը.

- «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2022-2023 ուսումնական տարում՝ 0,75 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ տարեկան 116 դասաժամ/
- «Խոհարարական գործ» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2022-2023 ուսումնական տարում՝ 0,5 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ տարեկան 184 դասաժամ/
- «Հասարակագիտություն» առարկայի դասախոս /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2022-2023 ուսումնական տարում՝ տարեկան 522 դասաժամ/
- Համակարգչային մասնագիտական մոդուլների դասախոս /աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2022-2023 ուսումնական տարում՝ տարեկան 504 դասաժամ/

Թափուր տեղերի համապատասխանատվության նկատմամբ սահմանված պահանջներն են՝

1. արտադրական ուսուցման վարպետի և մասնագիտական մոդուլների դասավանդողի համար.
   - տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:
2. դասախոսի համար.
   - մանկավարժական համապատասխան որակավորում /բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով/ կամ բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

Տեղեկացնում եմ նաև, որ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Խոհարարական գործ» մասնագիտությունների գծով առկա թափուր տեղերը համալրելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունն արդեն մեկ տարի պարբերաբար հրապարակվել է «Շրջապատ» շաբաթաթերթում, սակայն մինչ այսօր մրցույթին մասնակցելու հայտ չի ներկայացվել:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան